# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, ,

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 038

## ԱՐՏԱԿ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01072025-06-0061 և 23062025-06-0053 վկայականները, Արտակ Բադալյանի դիմումը, 16.05.2006 թվականի թիվ 1247 ռեստրով հաստատված պայմանագիրը.

1. Տրամադրել վարձակալության Արտակ Բադալյանին անշարժ գույքը՝ 06-113-0108-0216 ծածկագրով, մակերես՝ 0,71 հա, տարեկան 4415 դրամ վարձավճարով և 06-113-0108-0217 ծածկագրով, մակերես՝ 0.07հա, տարեկան 435 դրամ վարձավճարով (համաձայն նախկին պայմանագրի ընդհանուր վարձավճարի մասնաբաժինների):

2. Վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր կնքել Արտակ Բադալյանի հետ համաձայնագրի կնքման օրվանից 25 տարի ժամկետով:

3. Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, ,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 039

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով,« ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի բ) ենթակետով, 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններով, քանի որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Սվետլանա Զադորկինա Վլադիմիրովնա (ծնված՝ 16.10.1983թ.) դիմումը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը, չափագրման համաձայնությունը և 2024NJMYCZ (27.12.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը.

1. Հաստատել Լոռու մարզ, համայնք Ֆիոլետովո, 1-ին փողոց, 274 բնակելի տուն հասցեում գտնվող 06-113-0004-0002 կադաստրային ծածկագրով 0,16 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Օրինականացնել Լոռու մարզ, համայնք Ֆիոլետովո, 1-ին փողոց, 274 բնակելի տուն հասցեում գտնվող՝ առնելով Սվետլանա Զադորկինա Վլադիմիրովնա (ծնված՝ 16.10.1983թ.) սեփականության իրավունքով պատկանող (վկայական՝ N 10012020-06-0040 ) 1-ին փողոց, 274 բնակելի տուն հասցեում գտնվող 06- 113-0004-0002 կադաստրային ծածկագրով 0,16 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում վերջինիս կողմից ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի

իրավունք չառաջացնող, մինչև 2001թ-ը կառուցված 125.92 ք/մ արտաքին մակերեսով բնակելի տունը, 2020թ-ին կառուցված 122.48 ք/մ արտաքին մակերեսով բնակելի տունը, բաց պատշգամբը՝ 41.65 ք/մ և պարիսպը՝ 11.02 ք/մ:

3.Պարտավորեցնել Սվետլանա Չադրկինա Վլադիմիրովնային (հաշվեհամար՝ 900235003895 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2020թ-ին կառուցված ընդհանուր 122.48 ք/մ արտաքին չափերով բնակելի տան մաս կազմող շինությունների օրինականացման վճարը՝ 125909 ՀՀ դրամ, 41.65 ք/մ արտաքին մակերեսով բաց պատշգամբի օրինականացման վճարը՝ 42816 ՀՀ դրամ և ընդհանուր 11.020 քմ արտաքին չափերով պարիսպների օրինականացման վճարը՝ 11329ՀՀ դրամ: Ընդհամենը 180054 ՀՀ դրամ (մեկ հարյուր ութսուն հազար հիսունչորս):

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ

20 __ թ. ______________ ____
գ.Ֆիոլետովո